ԽԱՉԻԿ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ
բանասիրական գիտ. թեկնածու

ԿՈՄԻՏԱՍԻ ԿԵԱՆՔԻ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆԻՑ

1904 թ.

Յունուար 20, Էջմիածին.- Կոմիտասը նամակ է գրում Փարիզ՝ Արշակ Չոպանեանին, խնդրում է նրան ներփակ նամակը յանձնել Տ. Վռամշապուհին: Պատուիրում է կարդալ այդ նամակը, «ձեռքից եկածը անել» եւ «ջանք չխնայել» «հայ գեղջուկ երաժշտութեան պայծառացման» համար: Այնուհետեւ Կոմիտասը խօսում է այն մասին, որ «Հազար ու մի խաղ» ժողովածուից (առաջին յիսնեակ) ուղարկել է թէ՛ իրեն եւ թէ՛ Պիեր Օբոիին, խնդրում է յայտնել՝ ստացել է թէ ոչ: Վերջում պատուիրում է բարեւել «յատկապէս Օբոիին»:

ՊԲՀ, 1958, թ. 1, էջ 248:

Յունուար 22, Էջմիածին.- Կոմիտասը նամակ է գրում Մարիամ Թումանեանին եւ յայտնում է «Անուշի» (1903թ.) ընթերցումից իր ստացած տպաւորութեան մասին: Ելնելով երաժշտական բովանդակութեան ու բեմականացման հարմարաւէտութիւնից՝ Կոմիտասը խնդրում է որոշ փոփոխութիւններ կատարել «Անուշի» տպագրուած բնագրում: Այնուհետեւ Կոմիտասը պատմում է իր գործերի բազմազանութեան ու ժամանակի սղութեան մասին: «Ճնմարանում դաս ունեմ,- գրում է նա,- Մայր Աթոռի խումբն եմ վարում, Միջազգային երաժշտական ընկերութեան գիտական ժողովածուին ուսումնասիրութիւններ եմ տալիս, Կ. Պոլսից Վահրամ Մանկունու յանձնարարութեամբ դասագիրք եմ պատրաստում, պ. Մ. Աբեղեանի հետ ժողովրդական երգերի բառերն եմ խմբագրում, պատրաստում եմ եղանակները տպել տալու, աւելացրէք եւ իմ մասնաւոր զբաղմունքներս»: Նամակի վերջում գանգատւում է, որ երաժշտական գործիքներ չունի եւ այլն:

«Սովետական արուեստ», 1962, թ. 9, էջ 53:

Փետրուար 22, Թիֆլիս.- Հրապարակւում է Կոմիտասի «Վագներ» խորագրով յօդուածը :

«Տարազ», 1904, թ. 8, էջ 56:

Կոմիտաս, Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, 1941, էջ 171:

Մարտ 24, Թիֆլիս.- Գրաքննիչը թոյլատրում է Կոմիտաս վարդապետի եւ Մանուկ Աբեղեանի խմբագրած «Հազար ու մի խաղ» խորագրով ժողովրդական երգարանի առաջին յիսնեակի երկրորդ տպագրութիւնը. լոյս է տեսել Վաղարշապատում (70 էջ):

«Հազար ու մի խաղ», երկրորդ տպ., 1904, էջ 2:

Ապրիլ 25, Էջմիածին.- Գէորգեան ճեմարանում կազմակերպուած երաժշտական երեկոյթում ելոյթ են ունենում Կոմիտասի ղեկավարած երգչախումբը եւ նուագախումբը:

Ծրագրի առաջին բաժնում խումբը կատարում է «Մեզ նոր արեւ ծագեցաւ » (խմբերգ), «Ծիրանի ծառ» (մեներգ խմբով), «Արեւ թռվռալով եկաւ » (մեներգ դաշնամուրով եւ խումբ), «Արի, արի» (խմբերգ), «Քրդի հարայը» (փող մենանուագ, ջութակ, նայ, դաշնամուր), «Ճախարակի երգը» (Վազներ - խմբերգ): Երկրորդ բաժնում խումբը կատարում է «Հայրենեաց սիրով» (խմբերգ), «Սիրտս նման է» (մեներգ դաշնամուրով), «Ջինուոր ես» (խմբերգ), «Ուրիդ արա» (խմբերգ), «Հոլ արա» (մեներգ եւ խմբերգ), «Քնիր, իմ սիրուն» (ջութակ-դաշնամուր եւ դաշնակ): Երրորդ բաժնում՝ «Աղօթք» (մեներգ դաշնամուրով), «Դայնել ես» (խմբերգ), «Առնեմ երթամ» (խմբերգ), «Գարուն ա» (մեներգ, խումբ, սրինգ, փող, ջութակ, նայ, դաշնակ եւ դաշնամուր), «Էս առուն» (խմբերգ, դաշնակած), «Ոհ, ինչ քաղցր բան» (խմբերգ): Չորրորդ բաժնում՝ «Հո, օխնելի Աստուած» (խմբերգ), «Այ աղջիկ» (խմբերգ), «Հաբրբան» (մեներգ դաշնամուրով), «Քելեր-ցոլեր» (մեներգ), «Սարի սովոր» (խմբերգ), «Սիփանայ քաջեր» (խմբերգ, սրինգ եւ փող):

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 1319:

Մայիս 4, Էջմիածին.- Կոմիտասը մասնակցում է Գէորգեան ճեմարանի լսարանական բաժնի մանկավարժական խորհրդի Դ նիստին: Ժողովում քննարկում է երկրորդ կիսամեակի առաջադիմութեան հարցը: Արսէն Տէրտէրեանին տրում է ժամկէտ քննութիւններն աւարտելու համար:

ՀՀԱԱ, ֆ. 312, թղթ. 27, վաւ. 116, էջ 60:

Մայիս 3-7, Էջմիածին.- Կոմիտասն ու Թումանեանը հանդիպում են եւ զրուցում «Անուշ» օպերայի մասին: Այս շրջանում Կոմիտասն արդէն գրել էր «Անուշից» «Ասում են ուռին» եւ «Թող, կանչում են ինձ, մայրս կիմանայ» երգերը: Երբ Կոմիտասն իր սաների համար նուագելիս է լինում վերոյիշեալ հատուածները, յանկարծ բախում են դուռը եւ ներս են մտնում Յ. Թումանեանը, Յ.Յովհաննիսեանը, Մ. Արեղեանը եւ Գ. Լեւոնեանը: «Վաղուց ենք պատուհանիդ տակ կանգնած լսում քո երգը, նուագը իմ «Անուշից»,- ասում է Թումանեանը,- որքան լաւ, շնորհալի ձեւով ես յարմարեցրել եղանակները, Կոմիտաս, սքանչելի են...»: «Ինձ մի բան է պակասում, Յովհաննէս,- ասում է Կոմիտասը՝դառնալով Թումանեանին,- քո «Անուշը» օպերայի վերածելու համար պիտի լաւ ուսումնասիրել Չաթին դաղը, Դեբէտ գեղը, ձորը, դաշտը, իսկ ես լաւ պատկերացում չունեմ»: Թումանեանի առաջարկով նրանք որոշում են յաջորդ օրը մեկնել Լոռի:

Վ. Փարսադանեան, Յուշեր Կոմիտասի մասին,
«Սովետական արուեստ», 1959, թ. 5, էջ 69:
Յ. Թումանեան, «Երկերի ժող.», հտ. 5, էջ 267:

Մայիս 16, Թիֆլիս.- Հրապարակում է Կոմիտասի «Ֆերենց Լիսզտ» խորագրով յօդուածը՝Կոմիտաս վարդապետ ստորագրութեամբ:

«Տարազ», 1904, թ.19, էջ 173:
Կոմիտաս, Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, 1941, էջ 177:

[Յուլիս 4], Եղվարդ-Ծաղկեվանք.- Վարդավառի տօնի օրը Կոմիտասը Բիւրականից գալիս է Ծաղկեվանք՝ ներկայ լինելու ժողովրդական տօնախմբութեանը: Հանդիպելով իր սաներին՝ Կոմիտասը զրուցում է նրանց հետ եւ համապատասխան ցուցումներ տալիս ժողովրդական երգն արդիւնաւէտ հաւաքելու համար: «Այսօրուայ տօնախմբութեան հետաքրքրական կողմը,- ասում է նա,- մեզ համար ոչ թէ կերուխումն է, այլ այն երգերն ու պարերը, նուագներն ու խաղերը, որոնց միջոցով հայ գեղջուկն արտայայտում է իր կենսական ապրումները: Ահա տեսէք ինչպէս են խմբեր կազմել ահել, ջահել, հարս ու աղջիկներ, երիտասարդ տղաներ, երգում են ու պարում, սրտերը բաց անում: Եթէ բոլորս միասին խմբովին սկսենք շրջել դիտելու համար, շատերը, նկատելով մեզ, գեղջկական ամօթխածութեամբ պէտք է կամ դադարեցնեն երգն ու պարը, կամ այնպէս ազատ չզգան իրենց, ինչպէս կարող են զգալ առանց մեր ներկայութեան: Իսկ մեզ համար հետաքրքիր է լսել եւ տեսնել նրանց առանց կաշկանդումների, ազատ, համարձակ ու սրտաբաց»: Այս խօսակցութիւնից յետոյ բոլորը ցրւում են՝ հետամուտ իրենց նպատակին: «Երբեմն-երբեմն,- շարունակում է յուշագրողը,- դիտում էինք Կոմիտաս վարդապետին, թէ ինչպէս նա լարուած ուշադրութեամբ (նման առիթներում վեղար չէր դնում, որ աչքի չընկնի) մատիտն ու տետրը ձեռին, մօտենում էր այս կամ այն խմբին եւ նշումներ անում, գրի առնում լսածի ու տեսածի մասին»:

«Էջմիածին», 1957, թ. 9, էջ 50:

Յուլիս 22, Էջմիածին.- Կոմիտասը նամակ է գրում Վասիլի Ղորղանեանին եւ յայտնում է նրան, որ սպասել չի կարող, որովհետեւ մեկնում է «գիւղերը ճանապարհորդելու ու եկեղեցական հին եղանակներ ժողովելու»:

ՉԱԳԱԹ, Ղորղանեանի ֆոնդ:

Նոյն օրը, Էջմիածին.- Հոգեւոր ու ժողովրդական երգեր ձայնագրելու նպատակով Կոմիտասը մեկնում է Հայաստանի գիւղերը:

Անդ:

Սեպտեմբեր 12, Էջմիածին.- Կոմիտասը նամակ է գրում Վասիլի Ղորղանեանին եւ հրաւիրում է նրան մասնակցելու «Գէորգեան ճեմարանի եւ Վեհափառ Հայրապետի տարեդարձին»՝ սեպտեմբերի 25-ին եւ 26-ին: Կոմիտասը յորդորում է նրան այդ օրերին գալ Էջմիածին եւ լսել իր գրած երգերի ու Պատարագի կատարումները: «Հակառակ դէպքում,- առաջարկում է նա,- եկէք հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ կամ կիրակի, այդ օրերին ես ազատ եմ եւ ճեմարանում պարապմունք չունեմ»:

Անդ:

Սեպտեմբեր 24, Էջմիածին.-Գէորգեան ճեմարանի հիմնադրման երեսնամեակի առիթով Մայր Տաճարում տեղի է ունենում հանդիսաւոր Պատարագ, որի ընթացքում երգում է Կոմիտասի գլխաւորած քառաձայն երգչախումբը:

Նոյն օրը.- Ճեմարանի բակում տեղի է ունենում տօնական հանդէս: Ճեմարանի տեսուչ Կ. Կոստանեանը տարեկան հաշուետուութեան ընթացքում որպէս երաժշտութեան եւ երգե-

ցողութեան ուսուցիչ դրուապանքով կանգ է առնում «Կոմիտաս Վարդապետի գործունէութեան վրայ»:

«**Արարատ**», 1904, թ.10, էջ 841:

Հոկտեմբեր 10, Թիֆլիս.- Հրապարակում է Կոմիտասի «Յովսէփ Վերդի» խորագրով յօդուածը՝ Կոմիտաս Վարդապետ ստորագրութեամբ:

«**Տարազ**», 1904, թ.23, էջ 208:

Կոմիտաս, Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, 1941, էջ 182:

[Սեպտեմբեր-նոյեմբեր], Էջմիածին.- Կոմիտասն ուսանելու համար Գերմանիա մեկնող իր աշակերտ Սպիրիդոն Մելիքեանին տրամադրում է տարիների ընթացքում իր ներդաշնակած «Հայ ժողովրդական երգեր - Ազգագրական ժողովածու» խորագրով ձեռագիրը եւ պատուիրում է նրան արտագրել ու վերցնել իր հետ, ուսանելու ընթացքում «Գերմանական ազդեցութիւններով չտարուելու համար»: Սպ. Մելիքեանը այդ տետրից արտագրում եւ վերցնում է 255 երգ:

Կոմիտաս, Ժողովրդական երգեր, Եր., 1931, էջ 7:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 302:

[Նոյն շրջանում], Էջմիածին.- Կոմիտասը գերմաներէնից թարգմանում է Ֆրից Արլբիրգի «Զայնամարգութիւն» խորագրով ձեռնարկը (ձեռագիր 64 էջ):

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 747:

Դեկտեմբեր 4, Էջմիածին.- Գէորգեան ճեմարանի սրահում կազմակերպուած երեկոյթի ընթացքում Կոմիտասի ղեկավարած երգչախումբը նուագախմբի ընկերակցութեամբ կատարում է «Հայր մեր», «Հայրապետունկ Այգոյն», «Այսօր կանգնեցաւ» շարականները: Կոմիտասը,- պատմում է ականատեսը,- «ձգտում է եկեղեցական երգերի հետ զարգացնելու նաեւ եկեղեցական նուագածութիւնը»: «Եւ ահա սաքսաֆօն եւ այլ գործիքների որոտը ծնծղաների ցնծական հնչիւնները մի ահռելի ներդաշնակութեամբ միացած մարդկային ձայնի զուարթ ու լիահնչիւն դաշնակների հետ, թնդացնում է դահլիճը»:

«**Տարազ**», 1904, թ.32, էջ 295:

Դեկտեմբեր 12, Թիֆլիս.- Հրապարակում է դեկտեմբերի 4-ին ճեմարանի սրահում Կոմիտասի ղեկավարած համերգի եւ նրա կազմակերպած նուագախմբի անհրաժեշտութեանը վերաբերող Մ. Ք-ի «Պէտք է քաջալերե՞լ, թէ ոչ» յօդուածը: Խօսելով շարականների երգեցողութեանն օժանդակող նուագակցութեան մասին՝ յօդուածագիր Մ. Ք.-ն գրում է. «Երաժշտական գործիքներն աւելի են կանոնաւորում, աւելի են համաչափում խրոխտ դաշնակների կանոնաւոր յաջորդականութիւնը, զօրեղացնում են շեշտը, եւ պատկերանում է ձեր առաջ յաղթական թափորը իր բոլոր շուքով»: Խօսելով Կոմիտասի ջանքերի մասին՝ նա գրում է. «Ինչպիսի մեծ ծառայութիւն են մատուցել նրան նուագարանները եւ որպիսի խոբաթափանց հմտութեամբ նա օգտուել է դրանցից»: Կոմիտասի ղեկավարած համերգը հա-

մեմատելով յաջորդ օրուայ Դատարագի երգեցողութեան հետ եւ վերջինս գտնելով անբաւարար՝ յօդուածագիրն այն միտքն է յայտնում, որ եկեղեցին եւս պէտք է օգտուի երաժշտութեան գործիքաւորման այն հիանալի միջոցներից, որ կիրառական է դարձրել Կոմիտասը երգչախմբում:

«**Տարազ**», 1904, թ.32, էջ 295:

Դեկտեմբեր 21 (ն. տ.), Թիֆլիս.- «Новое обозрение » լրագրում հրապարակում է Կոմիտասի կեանքին ու գործունէութեանը նուիրուած Վ. Դ. Տորգանովի «Еще о Кавказской музыке » վերնագրով դրուատական յօդուածը:

«Новое обозрение », 1904,թ. 37, էջ 2:

Դեկտեմբեր 26, Թիֆլիս.- «Տարազ» շաբաթաթերթի «Գեղարուեստական քրոնիկոն» բաժնում հրապարակում է ընդարձակ հաղորդագրութիւն, որով առաջարկում է Ծննդեան տօների ընթացքում Կոմիտասին հրաւիրել Թիֆլիս, որպէսզի Դատարագի «Վանքի տաճարում» եւ ելոյթ ունենայ Արտիստական ընկերութեան սրահում:

«**Տարազ**», 1904,թ. 34, էջ 327:

Դեկտեմբեր 30, Էջմիածին.- Կոմիտասը նամակ է գրում Փարիզ՝ Արշակ Չոպանեանին: Իր դժգոհութիւնը յայտնելով Փարիզի եկեղեցու բացման հանդէսը անշուք կատարելու համար, Կոմիտասն անդրադառնում է Արմենակ Շահմուրադեանին: «Խնդրում եմ Արմենակիս լաւ խնամիր,- գրում է նա,- նորա աչքը այստեղ է, բայց իր վարժապետը ինչ յարգ ունեցաւ, որ աշակերտի աղերսը լսուէր...»: Այնուհետեւ Կոմիտասը տեղեակ է պահում նրան Թիֆլիսում իր տալիք համերգների մասին: «Գործերս յաջող են,- գրում է նա,- այժմ կգրաղուիմ հայ հին խազերու ուսումնասիրութեամբ եւ յուսով եմ, շուտով կարող պիտի լինեմ գաղտնիքը բանալ եւ գէթ ցԺԳ դարի եղանակները ստուգել: Հրատարակելու կպատրաստեմ ժողովրդական եղանակները դաշնակի, խմբի եւ այլնի համար»: Վերջում խնդրում է ողջունել Արմենակին:

ՊԲՀ, 1958, թ.1, էջ 249:

1905 թ.

Փետրուար 25, Թիֆլիս.- Ապրիլին տրուելիք համերգի կազմակերպիչ Ն. Ղամբարեանը նամակ է գրում նրան եւ խնդրում է իրեն ուղարկել համերգում կատարուելիք երգերի տեքստերը, որպէսզի թարգմանի եւ գրաքննիչի թոյլտուութիւնը ստանայ: Այնուհետեւ հարցնում է երգչախմբին մասնակցողների թուի մասին տեղեկութիւններ՝ տեղափոխման հարցերը կարգաւորելու համար:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 50:

Մարտ 3, Թիֆլիս.- Մարիամ Թումանեանը նամակ է գրում Կոմիտասին եւ յայտնում է, որ Թիֆլիսում տրուելիք համերգին վերաբերող հարցերը կարգաւորուած են: «Ես շատ

ուրախ եմ,- գրում է նա,- որ հնարաւորութիւն կունենամ Ձեզ հետ ծանօթանալու եւ խօսելու «Անուշ» օպերայի մասին: Եթէ կարելի է Ձեզ հետ բերէք ձայնագրած կտորները, ասում են շատ յաջող է դուրս եկել»:

ՉԱԳԱԹ, Մարիամ Թումանեանի ֆ. 455:

Մարտ 6, Թիֆլիս.- Վախճանւում է Մակար Եկմալեանը եւ թաղւում Խոջիվանքի գերեզմանատանը:

«Մշակ», 1905, թ.40, էջ 2:

Մարտ 20, Վաղարշապատ.- Կոմիտասը ճեմարանի երգչախմբի աշակերտների հետ միասին եկեղեցում կատարում է հոգեհանգիստ՝ նուիրուած Մակար Եկմալեանի յիշատակին: Պատարագի ընթացքում երգում է Կոմիտասի ղեկավարած քառաձայն երգչախումբը: Պատարագից յետոյ Կոմիտասը դամբանական է ասում, դրուատելով Եկմալեանի արժանաւորութիւնները՝ նրա հիմնաւորած գործի նշանակութիւնը:

«Մշակ», 1905,թ. 54, էջ 2:

Նոյն օրը, Թիֆլիս.- Հրապարակւում է Նորայրի՝ Կոմիտասի գործունէութեանը վերաբերող «Եկեղեցական երգեցողութիւն» խորագրով յօդուածը: Զարգացնելով երգեցողութեան մէջ կատարելագործութիւն մտցնելու միտքը՝ վերջինս գրում է. «Այնպիսի մի տաղանդ ունենք մենք յանձին բարձրապատիւ տ. Կոմիտաս վարդապետի, որի ձեռնհասութեան վրայ մենք մեծ հաւատ ունենք: Ազգը եւ եկեղեցին միջոց պիտի ընձեռեն հայ երաժշտապետին կարգի բերելու մեր եկեղեցու երգեցողութեան գործը կատարելագործութեան հասցնելու եւ ազատելու մեզ այն քաոսից, որ այժմ տիրում է մեր եկեղեցիներում»:

«Տարազ», 1905, թ.9, էջ 114:

Մարտ [20-25], Թիֆլիս.- Առանձին բրոշիւրով լոյս է տեսնում ապրիլի 3-ին, առաւօտեան Արտիստական ընկերութեան թատրոնում Կոմիտասի տալիք համերգի ծրագիրը: Ա) «Հայ հոգեւոր երաժշտութիւն» եւ բ) «Հայ ժողովրդական երաժշտութիւն». երգերի տեքստերը:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 1368:

Մարտ 25, Թիֆլիս.- Կոմիտասի ապրիլեան համերգի կազմակերպիչ Ն. Ղամբարեանը նամակ է գրում նրան՝ ուղարկելով 300 ռուբլի ճանապարհածախս: Ն. Ղամբարեանը համապատասխան հրահանգներ է տալիս Կոմիտասին ուղեւորութեան մասին: Պատուիրում է, որ աշակերտները վերցնեն իրենց բարձերն ու սաւանները եւ այլն:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 51:

Մարտ 27, Թիֆլիս.- «Տարազ» շաբաթաթերթում «Գեղարուեստական քրոնիկոն» ընդհանուր խորագրի տակ հրապարակւում է հաղորդագրութիւն այն մասին, որ ուրբաթ օրը Արտիստական ընկերութեան դահլիճում Կոմիտասի ղեկավարած ճեմարանական սաների

երգչախումբը տալու է իր «առաջին ազգային համերգը»: «Համերգի ծրագիրը,- ասուած է հաղորդագրութեան մէջ,- բացառապէս հ. Կոմիտասի ձայնագրած եկեղեցական եւ ազգային-ժողովրդական երգերն են»:

«Տարազ», 1905, թ.10, էջ 129, 134:

Մարտ 28, Քութահիա.- Հայ երիտասարդներից եւ օրիորդներից բաղկացած երգչախումբը Չխարիի հրկիզեալների օգտին ճեմարանական մի պարոնի ղեկավարութեամբ տալիս է համերգ: Կատարում են Կոմիտաս վարդապետի դաշնակած «Թռող բլբուլը չերգէ», «Ո՞հ, ինչ քաղցր բան», «Լօ՛, լօ՛, լօ՛» եւ ժողովրդական երգերից «Հաբրբան», «Իմ չինարի յարը» ու «Էսօր ուրբաթ է, պաս է» երգերը:

«Մշակ», 1905, թ.58, էջ 1:

Մարտ 29, Վաղարշապատ.- Կոմիտասը 59 հոգուց բաղկացած ճեմարանի երգչախմբային սաների հետ դուրս գալով Էջմիածնից՝ մեկնում է Թիֆլիս համերգներ տալու: «Կոմիտասը,- պատմում է Վ. Փարսադանեանը,- ճանապարհի համար վերցրել էր 12 արկղ ձու, պահածոներ եւ եռացրած ջուր: Պատուհանից դուրս նայել կամ սառը ջուր խմել թոյլ չէր տալիս»:

Վ. Փարսադանեան, Յուշեր Կոմիտասի մասին,
«Սովետական արուեստ», 1959, թ.5, էջ 70:

Մարտ 30, Թիֆլիս.- Կոմիտասը ճեմարանի երգչախմբային սաների հետ հասնում է Թիֆլիս եւ տեղաւորւում «Ղամբարեանների մօտ, ներքին յարկում»:Անդ:

Մարտ 31, Թիֆլիս.- «Մշակ» լրագրում հրապարակւում է «Հ. Կոմիտասի կոնցերտի առիթով» խորագիրը կրող ընդարձակ հաղորդագրութիւնը, նուիրուած ապրիլի 1-ին Արտիստական ընկերութեան դահլիճում Կոմիտասի տալիք համերգին: Ընդհանուր գծերով պատմելով Կոմիտասի կենսագրութիւնը՝ յօդուածագիր Ստ. Մ.-ն աւելացնում է. «Նա պատրաստել է մի օրինակելի երգեցիկ խումբ, որ լաւագոյնն է մինչեւ այժմ եղած բոլոր հայկական խմբերի մէջ եւ միաժամանակ ներդաշնակել է բազմաթիւ հայ ժողովրդական եւ եկեղեցական երգեր, ինչպէս նաեւ ներդաշնակել է ամբողջ Պատարագը»: Յօդուածի վերջում Ստ. Մ.-ն գրում է. «Թիֆլիսի հասարակութիւնը հ. Կոմիտասի համերգից կստանայ այնպիսի գեղարուեստական բաւականութիւն, որպիսին երբէք մինչեւ այժմ չի ստացել հայկական համերգից»:

«Մշակ», 1905, թ.59,էջ 1:

Ապրիլ 1, երեկոյեան, Թիֆլիս.- Արտիստական ընկերութեան դահլիճում տեղի է ունենում Կոմիտասի ղեկավարած ճեմարանական սաների քառաձայն երգչախմբի համերգը:

Առաջին բաժնում երգչախումբը կատարում է «Հայր մեր», «Այէլուա», «Լերինք», «Ով՛ զարմանալի», «Այսօր ձայնն», «Էջմիածին ի Հօրէ» եւ «Խորհուրդ խորին» հոգեւոր երգերը:

Երկրորդ բաժնում երգչախումբը կատարում է «Գարուն ա», «Դայնել ես», «Հաբրբան», «Այ աղջիկ», «Խումար», «Ուրիդ արա», «Հոլ արա», «Ծաղկաձոր», «Ձիգ տու», «Ամպել ա» եւ «Լօ՛, լօ՛, լօ՛» ժողովրդական երգերը:

«Էջմիածին ի Հօրէ» երգի դպաւորութիւնը այնպիսին է լինում, որ ունկնդիրները բոլորը ոտքի են կանգնում: «Այդ դպաւորութիւնը,- գրում է ականատեսներից մէկը,- այնքան խորն էր եւ հուզիչ, որքան եւ ազնիւ ու հայացի»:

«Տարազ», 1905, թ.11, էջ 140:

Ապրիլ 3, Թիֆլիս.- «Տարազ» շաբաթաթերթում հրապարակում են Կոմիտասի «Գարուն ա» վերնագրով ստեղծագործութեան նոտաները, որն ապրիլի 1-ին երգուել էր Արփիսփական ընկերութեան դահլիճում:

Նոյն օրը, Թիֆլիս.- «Տարազում» հրապարակում է յայտարարութիւն ապրիլի 3-ին, ցերեկը Արփիսփական ընկերութեան դահլիճում Կոմիտասի ղեկավարած երգչախմբի դալիք «Հոգեւոր ժողովրդական համերգի մասին»:

«Տարազ», 1905, թ.11, էջ 137:

Նոյն օրը, Թիֆլիս.- «Տարազ» շաբաթաթերթում հրապարակում է ընդարձակ հաղորդագրութիւն ապրիլի 1-ին Արփիսփական ընկերութեան դահլիճում Կոմիտասի տուած համերգի վերաբերեալ: «Բոլոր երգուածները,- ասուած է հաղորդագրութեան մէջ,- Կոմիտաս վարդապետի դաշնակածներն էին: Թատրոնում ասեղ գցելու տեղ չկար, չնայեած որ ոչ ոքի տոմսակ չէր առաջարկուած»: «Ժողովուրդը,- ասուած է վերջում,- հ. Կոմիտասին վերաբերուեց խորին պատկառանքով եւ բուռն շնորհակալութեամբ»:

«Տարազ», 1905, թ.11, էջ 140:

Նոյն օրը, ժամը 3-ին, Թիֆլիս.- Արփիսփական ընկերութեան դահլիճում տեղի է ունենում Կոմիտասի ղեկավարած ճեմարանական սաների երգչախմբի երկրորդ համերգը:

Առաջին բաժնում Կոմիտասի դաշնակած հոգեւոր երգերից խումբը կատարում է «Փառք քեզ» (վեցձայն խմբերգ), «Սուրբ, սուրբ» (վեցձայն խմբերգ), «Յամենայնի» (քառաձայն խմբերգ), «Տէր, ողորմեա» (քառաձայն մեներգ խմբով), «Աշխարհն ամենայն» (հնգաձայն խմբերգ), «Զքեզ օրհնեմք» (եռաձ. եւ քառ. մեներգ եւ խմբերգ), «Աստուածածին» (եռաձայն եւ հնգաձայն խմբերգ):

Երկրորդ բաժնում Կոմիտասի դաշնակած ժողովրդական երգերից խումբը կատարում է «Ծիրանի ծառ» (եռաձայն եւ քառաձայն, մեներգ խմբով եւ խմբերգ), «Անձրեւն եկաւ » (վեցձայն խմբերգ), «Չինար ես» (մեներգ դաշնակով), «Հո՛ Օխնելի» (զուրթաներգ Լոռու, քառաձայն խմբերգ), «Արեւ թրովրռով» (մեներգ դաշնակով եւ քառաձայն խմբերգ), «Սարերի վրով» (քառաձայն խմբերգ), «Լօ՛, լօ՛, լօ՛» (քառաձայն խմբերգ):

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 1368, Յայտագրերի ֆ.55:

Ապրիլ 5, Թիֆլիս.- «Մշակ» լրագրում հրապարակում է «Կոմիտաս վարդապետի հոգեւոր-ժողովրդական համերգը» խորագիրը կրող յօդուածը՝ նուիրուած ապրիլի 1-ին եւ 3-ին Արփիսփական ընկերութեան դահլիճում Կոմիտասի ունեցած ելոյթին: «Համերգները ցոյց տուին,- գրում է յօդուածագիրը,- որ նա իր տրամադրութեան տակ ունի մեծ, հարուստ

եւ չափազանց հեւպաքրքրական նիւթեր: Այն, ինչ որ հանդէս բերվեց համերգում, միայն մի աննշան մասն է այն շրեմարանի, որ ունի մշակողն իր ձեռքին: Ժողովրդական ճաշակի յատուկ գծերը, նրա երգի բազմազան ելեւէջները եւ դայլայլիկները հնարաւոր են դարձնում խօսել եւ մտածել հայկական երգի եւ երաժշտութեան ինքնուրոյն բնաւորութեան մասին առաջուանից աւելի լայն չափերով»:

«Ժողովրդական երգերն ընդհանրապէս աւելի նպաստաւոր տպաւորութիւն են թողնում, քան հոգեւոր երգերը: Նրանք աւելի լաւ են մշակուած, աւելի ճոխ բովանդակութիւն ունեն, աւելի բազմերանգ նրբութիւններով են օժտուած եւ աւելի իրական տրամադրութիւններ են ներշնչում»: Ըստ յօդուածագրի՝ հոգեւոր երգերից լաւ տպաւորութիւն են թողել միայն «Փառք քեզը», «Խորհուրդ խորինը» եւ «Ձքեզ օրհնեմքը»: Իբրեւ թերութիւն նշում է. «Հոգեւոր երգերի մէջ պակասում էին պաֆոսը եւ հոգեզմայլութիւնը, որոնք դարձնում են հոգեւոր համերգը տպաւորիչ եւ գրաւիչ»: «Կոմիտաս վարդապետը,- ամփոփում է իր խօսքը յօդուածագիրը,- մեծ աշխատանք եւ արդիւնաւէտ գործ է ձեռնարկել, որին ցանկանում ենք կատարեալ յաջողութիւն»:

«Մշակ», 1905, թ.62, էջ 1:

Ապրիլ 6, Թիֆլիս.- Յովնանեան օրիորդաց դպրոցի դահլիճում Կոմիտասը կարդում է բանախօսութիւն հայ ժողովրդական ու եկեղեցական երաժշտութեան մասին, մերթ ընդ մերթ իբրեւ բացատրութիւն երգելով առանձին կտորներ: «Դասախօսը,- ասուած է «Մշակում»,- տեսականին միացնում էր գործնականը անձամբ կամ իր երգեցիկ խմբով: Քիչ անգամ է առիթ ունեցել Թիֆլիսի հասարակութիւնը ներկայ լինելու մի այդպիսի վերին աստիճանի հեւպաքրքիր դասախօսութեան: Այդ դասախօսութիւնը շատ բան էր պարզում նախորդ համերգների մութ մնացած կողմերից»: (Դասախօսութեան սղագրութիւնը տես Կոմիտաս «Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ» Եր., 1941, էջ 9):

«Տարազ», 1905, թ.12, էջ 150:

«Մշակ», 1905, թ.6, էջ 1:

Նոյն օրը, Թիֆլիս.- "Тифлисский листок" լրագրում հրապարակում է Մ-ի "Концерт отца Комитаса" խորագրով յօդուածը: Խօսելով հայկական երաժշտութեան առանձնայատկութիւնների մասին՝ յօդուածագիրը ցոյց է տալիս, որ Կոմիտասն ունի համապատասխան գիտելիքներ՝ լուծելու համար այդ հարցերը: Անդրադառնալով Արտիստական ընկերութեան դահլիճում տուած համերգներին՝ նա կանգ է առնում իւրաքանչիւր համարի վրայ եւ արժեքաւորում ու բնութագրում է դրանք: «Երգչախումբը եւ նրա ղեկավարը,- վերջում գրում է յօդուածագիրը,- ժողովրդի մէջ ունեցան հսկայական յաջողութիւն, իսկ ծրագիրը շատ բան էր տալիս լսողի սրտին»:

"Тифлисский листок " , 1905,թ. 68, էջ 2:

[Ապրիլ 3-8], Թիֆլիս.- Կոմիտասը նկարում է ճեմարանի երգչախմբային սաների հետ:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 200:

Ապրիլ [7-8], Թիֆլիս.- Կոմիտասը Յովնանեան դպրոցի դահլիճում հայ ժողովրդական ու եկեղեցական երաժշտութեան մասին կարդացած բանախօսութիւնը կրկնում է երաժշտական դպրոցի դահլիճում:

«**Մուրճ**», 1905, թ. 5, էջ 205:

Ապրիլ 8-9, Թիֆլիս.- «Մշակ» լրագրի երկու համարում հրապարակում է ապրիլի 6-ին Յովնանեան դպրոցի դահլիճում Կոմիտասի կարդացած «Հայ ժողովրդական եւ եկեղեցական երգերը» խորագրով դասախօսութեան Տիգրան Չաուէնի կողմից կատարուած սղագրութիւնը:

«**Մշակ**», 1905,թ. 65, էջ 1, թ. 66, էջ 2:

Ապրիլ 10, Թիֆլիս.- «Տարազ» շաբաթաթերթում հրապարակում է Նորայրի «Ազգային եկեղեցական համերգը եւ եկեղեցականները թատրոնում» յօդուածը՝ նուիրուած ապրիլի 1-ին Արտիստական ընկերութեան դահլիճում Կոմիտասի տուած համերգին: Ըստ յօդուածագրի՝ այդ համերգը այն տպաւորութիւնը չի թողել, ինչ նա ակնկալել է: Շարունակութեան մէջ նա աշխատում է ցոյց տալ անյաջողութեան պատճառները եւ իբրեւ այդպիսին նշում է այն հանգամանքը, որ օպերային երաժշտութեանը սովոր ունկնդիրների համար խորթացուած են Կոմիտասի բերած դայլայլները: Երկրորդ պատճառը յօդուածի հեղինակը համարում է ճեմարանի սաների երկչոտութիւնը. «Նրանք քաշւում էին, ուստի եւ այդ արտասովոր դրութեան մէջ նրանց երգում չէր հնչում վստահութեան այն գեղգեղանքը, որ շատ անգամ հուզել է մեզ ճեմարանի հանդէսներում, սքանչացրել հայերէն երգող շրջակայքին, հայ ժողովրդին»: Անյաջողութեան երրորդ պատճառը նա տեսնում է յատկապէս ժողովրդական երգերի համարների ոչ յաջող ընտրութեան մէջ: Միւս պատճառը համարում է եղանակի կշռոյթի անբաւարարութիւնը. «Մեր երգերը,- գրում է նա,- ծանր եղանակներ չունեն, բոլոր լէլէները կամ յորդոր են կամ միջակ: Արագ ու բուռն են նրանք թէ՛ խինդ, թէ՛ վիշտ արտայայտելիս: Իսկ երբ խմբական քառաձայն դարձնելու դիտումով եղանակները ծանրանում են, իրենց բնական վիճակից ելնում, կորցնում են ժողովրդականութեան դրոշմը եւ աշխուժութիւնը: Յանկարծ խմբական երգերը ծանր եղանակ էին ընդունել, ուստի եւ մեր կարծիքով կենդանի տպաւորութեան դէմ մի փոքր մեղանչել էին»:

«**Տարազ**», 1905, թ.12, էջ 145:

Նոյն օրը, Թիֆլիս.- «Տարազ» շաբաթաթերթում «Գեղարուեստական քրոնիկոն» ընդհանուր վերնագրի տակ հրապարակում է ապրիլի 6-ին Յովնանեան դպրոցի դահլիճում Կոմիտասի կարդացած դասախօսութեան վերաբերեալ ընդարձակ հաղորդագրութիւն: «Բազմաթիւ ունկնդիրների վրայ,- ասուած է «Տարազում»,- շատ մեծ տպաւորութիւն թողեց երաժշտագէտ հօր դասախօսութիւնը: Յանկալի էր, որ հ. Կոմիտասը հնարաւոր կացուցանէր իր ժամանակը բաժանել Ս. Էջմիածնի ճեմարանի եւ Թիֆլիսի մէջ: Թիֆլիսում հ. Կոմիտասին հրաւիրում ենք հիմնել երգեցողութեան դասընթացներ, կազմել երկսեռ խմբեր եւ ազգային-ժողովրդական երգերը հաստատ հիմքերի վրայ դնել»:

Անդ, էջ 150:

Մայիս, Թիֆլիս.- «Մուրճ» ամսագրում հրապարակում է Տ. Զաւէնի «Հ. Կոմիտաս վարդապետի արուեստը» խորագրով յօդուածը: Անդրադառնալով Արտիստական ընկերութեան դահլիճում ապրիլի 1-ին եւ 3-ին Կոմիտասի տուած համերգներին՝ յօդուածագիրն աշխատում է բացատրել ունկնդիրների կողմից ցուցաբերուած սառը վերաբերմունքի պատճառները: Առաջինը համարելով «ճեմարանական սաների քաշուածութիւնը»՝ նա մատնացոյց է անում նաեւ այն, որ բազմաձայն երգեցողութիւնը խորթ է եղել ունկնդիրների համար: Երկրորդ պատճառը համարելով աւելի լուրջ՝ նա հանգամանօրէն կանգ է առնում դրա վրայ: «Կոմիտաս վարդապետը,- գրում է նա, - մտցնում է մեր մէջ երաժշտական մի այնպիսի բարդ արուեստ, ինչպիսին է Վագներինը, արուեստ, որ իր անդրանիկ քայլերում ընդդիմադրութեան հանդիպեց շատ աւելի նուրբ ու կրթուած ճաշակով ժողովուրդների կողմից»: «Հետեւաբար,- եզրակացնում է նա,- շատ բնական էր, որ հայ հասարակութիւնը չգնահատէր տաղանդաւոր վարդապետի գործն այնպէս, ինչպէս որ պէտք է: Նա գալիս էր մեզ մօտ մի նոր արուեստով, մի նոր դպրոցով, որ գիտակցօրէն դատելու համար անհրաժեշտ է նրա հետ մօտիկից ծանօթանալ ու փնտրել, գտնել ու ճշտել նրա հիմքերը ու ղեկավարող օրէնքները»:

Ընդհանուր գծերով շարադրելով Կոմիտասի կենսագրութիւնը՝ նա կանգ է առնում բեռլինեան շրջանում նրա ստացած գիտելիքներին եւ դրա հիման վրայ անդրադառնում է նրա մշակած երաժշտագիտական սկզբունքներին: Ըստ Տ. Զաւէնի՝ Կոմիտասի նպատակն է եղել «Մեր երաժշտական սեփական ու հարազատ տարրերի վրայ բարձրացնել մեր ապագայ ազգային երաժշտութեան բարդ ու բազմապիսի շէնքը»:

«Մուրճ», 1905,թ. 5, էջ 197:

Մայիս, Վիեննա.- «Հանդէս ամսօրեայ» ամսագրում հրապարակում է Կ. Տուրեանի «Ժողովրդական երգեցողութիւնը ռուսահայերի մէջ» խորագրով յօդուածը, ուր մի հատուած նուիրուած է Կոմիտասի գործունէութեանը:

«Հանդէս ամսօրեայ», 1905, թ. 5, էջ 138:

Յունիս 16, Թիֆլիս.- Գրաքննիչը թոյլատրում է Կոմիտաս վարդապետի եւ Մանուկ Աբեղեանի խմբագրած «Հազար ու մի խաղ» ժողովրդական երգարանի երկրորդ յիսնեակի տպագրութիւնը : Լոյս է տեսել Վաղարշապատում 1905 թ., 103 էջ:

«Հազար ու մի խաղ», երկրորդ հիսնյակ, 1905, էջ 2:

Յունիս 25, Էջմիածին.- Կոմիտասը նամակ է գրում Փարիզ՝ Մարգարիտ Բաբայեանին: Տեղեկութիւն տալով իր հիւանդութեան մասին՝ Կոմիտասը շարունակում է. «Ուրախութեամբ կուղարկեմ իմ բարեկամ Օբոիին 100 երգ, աւելին կարող էի, բայց ձեռքիս տակ մի երկու անհետաձգելի կարեւոր աշխատանք ունեմ: Խնդրում եմ, եթէ կարելի է իմանաք եւ նեղութիւն քաշէք ինձ հաղորդելու, թէ մինչեւ երբ պէտք է հասցնեմ այդ երգերը, այս ամռան ամիսներին աշխատել չեմ կարող, հոգնել եմ, բժիշկներն էլ արգելել են մինչեւ սեպտեմբերի վերջը պարապելը»:

«Գործերս յաջող են գնում, փոքրիկ նուագախումբ էլ եմ կազմել (orchester) ճեմարանում, յոյս ունեմ կամաց-կամաց ընդարձակել:

Երեւի յաջողութիւն կունենայ Ձեր իմ մասին պ. Մանթաշեանին արած միջնորդութիւնը:

Մեր շուրջը արհաւիրք, մարդասպանութիւն, կողոպուտ, աւեր, հրդեհ, մի խօսքով շունը տիրոջը չի ճանաչում, ամեն բան անորոշութեան մէջ է, ոչ մի ապահովութիւն չկայ, տէրութիւնը իր գլուխը կորցրել է:

Ինչպէս գրել էիք, չկարողացայ ուղղակի պ. Օրոիին գրել, որովհետեւ ես գիտեմ միայն նորա շատ հին հասցէն: Խնդրեմ նեղութիւն կրէք յայտնելու երգերի մասին գրածս»:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի Ֆ.,1339:

[Յունիս -22, Յուլիս], Էջմիածին.- Կոմիտասը տենդով հիւանդ պառկած էր անկողնում: Բժիշկները նրան արգելում են պարապել: Որոշում է գնալ Հառիճ եւ ամբողջ ամառը մնալ այնտեղ:

Անդ:

Յուլիս [22], վաղ առաւօտեան Վաղարշապատ.- Կոմիտասը եւ Երուանդ Տէր-Մինասեանը դուրս գալով Էջմիածնից՝ կառքով մեկնում են Ղարխուն կայարանը, ապա Երեւանից եկող գնացքով մեկնում են Ալեքսանդրապոլ:

Յովհաննէս Մելքոնեան, Հառիճի մենատրան, 1905թ.,
«Ամառ», «Գարուն», 1969, թ. 4, էջ 20:

Նոյն օրը, երեկոյեան.- Կոմիտաս վարդապետը եւ Երուանդ Տէր-Մինասեանը վաղ առաւօտեան դուրս գալով Ալեքսանդրապոլից՝ երկու կոզակի ուղեկցութեամբ կառքով մեկնում են Հառիճ:

Անդ, էջ 24:

Նոյն օրը, կէսօր.- Կոմիտասը եւ Երուանդ Տէր-Մինասեանը հասնում են Հառիճ:

Անդ:

Յուլիս 24, Հառիճ.- Կոմիտասը եւ Երուանդ Տէր-Մինասեանը Հառիճի վանքում մասնակցում են Վարդավառի տօնակատարութեանը: «Վարդավառի տօնին,- գրում է Կոմիտասը, ուիտր էր եկել մեծ բազմութեան: Ուիտրին գիւղացի աղջիկները, նորահարսներն ու տղաները, ինչպէս սովորոյթ է, պար են բռնում, խաղ կապում ու երգում: Ափսոս, որ այդ բնական, բանաստեղծական, բովանդակալից եւ գողտրիկ պարերին մեծ հարուած է տուել եւ տալիս է այլանդակ, անճաշակ եւ կարծր զուռնան»:

Կոմիտաս, Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, 1941, էջ 17-18:

Յուլիս 25, երկուշաբթի, Հառիճ.- Կոմիտասի խնդրանքով հայր Երուանդը (Երուանդ Տէր-Մինասեան) գնում է գիւղ եւ ազգականների հարսներին ու աղջիկներին հաւաքում ու բերում է վանքի բակը: «Այ, այժմ,- գրում է Կոմիտասը,- սկսեցինք հայրենի սրտալի երգեր լսել եւ հարազատ ուիտր անել: Ես արդէն թուղթն ու մատիտը պատրաստ, դուրս էի եկել շինութեան սալայատակ տանիքը եւ սպասում էի նոցա գալուն: Այս անգամ ներկայ էի հէնց

սկզբից. ուրիշ անգամներին հնար չէր լինում, որովհետև պար բռնելն սկսում են գիշերով, իսկ ես հասնում էի եւ պատրաստ երգեր էի լսում: Տեսայ եւ զգացի, թէ որքան սխալուել եմ»:

Կոմիտասն ականատես է լինում պարի սկզբնաւորմանը, զարգացմանն ու աւարտին, ապա մօտենում է պարողներին եւ խնդրում է երգել առաջին խաղը վերջին պարագլխի եղանակով: «Երբ ինքս,- շարունակում է Կոմիտասը,- արծարծեցի եւ յիշեցնել կամեցայ իւրաքանչիւր նախկին պարագլխի երգածը, ամենեին կարեւորութիւն չտուին սեփական ստեղծագործութեան, քանի որ գիւղի առաջին երգչուհին իր ոլորուն ձայով ու բնատուր ձիրքով, գեղարուեստական ամփոփ արտայայտութիւն էր տուել բոլորի թոթովանքին: Առարկեցի, թէ «Էղոնք լաւը չեն»: Մինչեւ անգամ զարմանում էին, որ մի «խաղ ասող վարդապետ» չնչին բաների հետեւիցն է ընկել»:

Այդ օրը Կոմիտասը գրի է առնում 34 նոր երգ, որոնց թւում նաեւ «Աման Թելօ, Թելօ ջան» երգը:

Անդ, էջ 18-24:

Յուլիս [26-9], օգոստոս, Հառիճ.- Կոմիտասը գողունի ականջալուր է լինում, թէ ինչպէս վանքին կից փողոցում «պանիքի վրայ նստած մի չափահաս աղջիկ աթար է շինում ու երգում.

Մայրիկ ջան, ինչ էնէ քու բալէն,
Մայրիկ ջան, մայրիկ ջան,
Հարցրու իմ հալէն:
Մայրիկ ջան, ախ, ինչ էնեմ.
Ախ ինչ էնեմ, ախ ինչ էնեմ:
Մայրիկ ջան, անտէր թողիր քու բալին
Մայրիկ ջան, անտէր թողիր քու բալին:
Վայ, վայ, վայ, վայ, վայ:

Ձայնագրելով ու գրի առնելով երգի այս հատուածը՝ Կոմիտասն սպասում է շարունակութեանը, երբ «Յանկարծ մի պառաւ բարկացած գոռում է եւ ցած է կանչում աղջկան: ... Անիծեցի պառաւին,- գրում է Կոմիտասը,- որ խանգարեց: Այնուհետեւ ականջս դուրսն էր, բայց էլ երգի ձայնը չլսեցի»:

Անդ, էջ 24:

Յուլիս 22 [օգոստոս սկիզբ], Հառիճ.- Շուրջ երկու շաբաթ մնալով Հառիճի վանքում եւ ապաքինուելով, Կոմիտասը մեկնում է Ալեքսանդրապոլ՝ դիմաւորելու Թիֆլիսից Ալեքսանդրապոլի վրայով Էջմիածին մեկնող Խրիմեանին:

Անդ, էջ 17:

«Արարատ», 1905, թ. 9, էջ 807:

Օգոստոս 10, ժամը 11[40], Ալեքսանդրապոլ.- Կայարանում Կոմիտասը այլոց հետ միասին դիմաւորում է Թիֆլիսից Ալեքսանդրապոլ եկող Մկրտիչ Խրիմեանին:

Անդ:

Օգոստոս 15, առաւօտեան, Ալեքսանդրապոլ.- Խրիմեանին ուղեկցող Կոմիտասը գնացքով Ալեքսանդրապոլից մեկնում է Էջմիածին:

Անդ:

Նոյն օրը, երեկոյեան, Վաղարշապատ.- Կոմիտաս վարդապետը Մկրտիչ Խրիմեանի հետ հասնում է Էջմիածին:

Անդ:

[Օգոստոս-սեպտեմբեր], Վաղարշապատ.- Լոյս է տեսնում Կոմիտաս վարդապետի եւ Մանուկ Աբեղեանի խմբագրած «Հազար ու մի խաղ» խոտագրով ժողովրդական երգարանի երկրորդ յիսնեակը (103 էջ):

ՊԲՀ, 1958, թ. 1, էջ 250:

[Հոկտեմբերի սկիզբ], Վաղարշապատ.- Նեարդային հիւանդութիւն ստանալուց յետոյ Կոմիտասը ապաքինման համար մեկնում է Թիֆլիս:

ՊԲՀ, 1958, թ. 1, էջ 250:

[Հոկտեմբեր 25-4 նոյեմբեր], Թիֆլիս.- Բուժման նպատակով Թիֆլիս ժամանած Կոմիտասը յաճախ այցելում է աշուղ Ջիւանու ընտանիքին. «Իմ մօրից,- գրում է Ջիւանու որդի Գ. Լեւոնեանը,- նա տեղեկութիւններ էր հարցնում Ալեքսանդրապոլի հին պարերի եւ պարեղանակների մասին»:

«... Մի օր,- շարունակում է Գ. Լեւոնեանը,- հայրս սունդուկից հանեց եւ Կոմիտասին ընծայաբերեց հայ երաժշտութեան տեսականուն վերաբերող Պոլսում տպագրուած մի հին գիրք (Գապասաքալեան): Նա ուրախացաւ անչափ՝ երեխայի պէս ստանալով իր համար այսպիսի մի հազվագիւտ նուէր:

- Դէ որ այդպէս է, Ջիւանի, ես քեզ համար հիմա կերգեմ ժողովրդական մի լաւ երգ,- ու Կոմիտասը գլեց. «Սիրտս նման է էն փլած տներ»:

Գ. Լեւոնեան, Յուշեր, 1959, էջ 129:

[Օգոստոս-նոյեմբեր], Վաղարշապատ, Թիֆլիս.- Կոմիտասը Մարգարիտ Բաբայեանի միջնորդութեամբ համաձայնութեան գալով երաժշտագէտ-պալէոգրաֆ Պիեռ Օբռիի հետ, ձեռարկում է իր եւ Մ. Աբեղեանի խմբագրած «Հազար ու մի խաղ» խոտագրով ժողովածուի (Ա եւ Բ յիսնեակ) երգերը (թուով 100 երգ), եղանակների հետ մեկտեղ Փարիզում հրապարակել ֆրանսերէն ու հայերէն լեզուներով: Երգարանի համար «Հայ ժողովրդական երաժշտութիւնը» վերնագրով մի ընդարձակ ուսումնասիրութիւն է գրում Կոմիտասը: Երգերի թարգմանութիւնը կատարում է Արշակ Չոպանեանը:

ՊԲՀ, 1958, թ. 1, էջ 250:

«Անահիտ», 1931, թ. 1-2, էջ 109:

ՉԱԳ-ԱԹ, Կոմիտասի ֆ. 1339:

Նոյն շրջանում, Թիֆլիս.- Կոմիտասը նամակ է գրում Փարիզ՝ Արշակ Չոպանեանին եւ խնդրում է նրան ֆրանսերէնի թարգմանել «Հազար ու մի խաղ» Ա յիսնեակի ամբողջ տեքստը, որից յետոյ կուղարկի նաեւ Բ յիսնեակը: Կոմիտասը նրան ցուցում է տալիս թարգմանութիւնը կատարել բառացի. «Ես թէեւ հիւանդ,- գրում է նա,- բայց եւ այնպէս պատրաստ եմ մեր ժողովրդական եղանակների կազմութեան ուսումնասիրութիւնը ժամանակին հասցնել»: «Յառաջաբանը,- շարունակում է Կոմիտասը,- կլինի շատ ընդարձակ՝ մանրակրկիտ բացատրութիւններով եւ փորագրութիւններով, որպէսզի պարզ լինի մեր ժողովրդական երգերի ստեղծագործութեան եղանակը եւ հանգամանքը»:

ՊԲՀ, 1958, թ. 1, էջ 250:

Դեկտեմբեր, Վաղարշապատ.- Հրապարակում է հաղորդագրութիւն, որ բժշկուելու համար Թիֆլիս մեկնած Կոմիտաս վարդապետը վերադարձել է Մայր Աթոռ:

«**Արարատ**», 1905, թ. 12, էջ 1072:

Յունուար-դեկտեմբեր, Էջմիածին.- Կոմիտասը ձեռնարկում է մի ընդհանուր տետրի մէջ ամփոփել իր հաւաքած, մշակած ու ձայնագրած շարականները: Այդ տետրը «Շարական. հին եղանակներ» ընդհանուր խորագրով պարունակում է վարժութիւններ, խազագրումներ, նոտաներ, բացատրութիւններ ու այլեւայլ բնոյթի սեւագրութիւններ: Գրառումները կատարուած են մատիտով ու թանաքով:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 631: